

ՄՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ
(մուկն, ունկն / ականջ-(ք))

ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Պատմահամեմատական հայերենագիտության մեջ ընդունված տեսակետի համաձայն՝ հին հայերենի բազմաթիվ բառերի (ըստ Հ. Աճառյանի՝ 220¹)՝ արմատի մաս չկազմող ձայնորդական -ն վերջնահանգը, որն առկա է ինչպես բնիկ (հմմտ. *ակն*, *արմուկն*, *դալուկն*, *դիակն*, *դուռն*, *ձուկն*, *մուկն*, *ունկն* են), այնպես էլ փոխառյալ (հմմտ. *դաշն*, *մաշկն*, *մատուռն*, *նեռն*, *նուռն* են)² բազմաթիվ բառերում, զուտ հայերենյան երևույթ է, որովհետև այդ հնչույթը չունեն ո՛չ հ.-ե. ցեղակից ձևերը, ո՛չ էլ փոխատու լեզուների համապատասխան ձևերի մեծ մասը: Այդպիսի վերջնահնչույթ ունեն նաև հին հայերենի բառաֆոնդի դեռևս չստուգաբանված բազմաթիվ բառեր (հմմտ. *խաշն* «մանր եղջերավորների հոտ», *ճիզն* «նեղություն, ջանք», *ցակն* «աղքատություն» են): Եթե վերոհիշյալ տեսակետը միանշանակ է, ապա այդպիսին չի կարող համարվել մյուս պնդումը, ըստ որի՝ այդ բոլոր բառերում հայերենյան հավելում է նաև -ն-ին նախորդող բաղաձայնը, մասնավորապես՝ -կ-ն: Այսպես, Հ. Հյուբշմանից սկսած՝ հայերենագիտության այն երախտավորները, ովքեր անդրադարձել են հայերենի ստուգաբանության հարցերին (Ա. Մելե, Հ. Աճառյան, Գ. Ջահուկյան), հայերենյան հավելում են համարել նաև *մուկն* և *ունկն* «ականջ» բառերի -կն հնչույթային հաջորդականությունը՝ *մու-կն*, *ուն-կն*³: Այսինքն՝ ոչ միայն վերջին -ն-ն: *Մուկն*-ից -կն-ի առանձնացումը կատարվում է, մասնավորապես, *ձուկն*, *արմուկն* բառերի -կն // -(ու)կն՝ մասնիկների սահմանազատման համաբանությամբ: Ըստ էության՝

¹ Այդ բառերի ամբողջական ցանկը տե՛ս Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. III, Եր., 1957, էջ 444-445:

² Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում» (այսուհետև՝ **Հր. Աճառյան**, ՀԱԲ) չստուգաբանվածների կարգում են նաև *դաշն* և *նուռն* բառերը: Դրանցից առաջինը, ըստ Գ. Ջահուկյանի, «փոխառություն է իրանական աղբյուրից», իսկ երկրորդը՝ խոտիերենից (տե՛ս **Գևորգ Ջահուկյան**, ՀԱԲ, Հայերեն ստուգաբանական բառարան (այսուհետև՝ **Գևորգ Ջահուկյան**, ՀԱԲ), Եր., 2010, էջ 184 և 574):

³ Տե՛ս **Հայնրիխ Հյուբշման**, Հայերենի քերականություն, Եր., 2003, էջ 484, **Անտուան Մելե**, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 1978, էջ 226, **Հ. Աճառյան**, ՀԱԲ, հ. III, Եր., 1977, էջ 354, 603, **Գ. Ջահուկյան**, Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Եր., 1959, էջ 192, **Джаукян Г. Б.**, Очерки истории дописьменного периода армянского языка, Եր., 1967, էջ 100, **Խույնի**, Сравнительная грамматика армянского языка, Եր., 1982, էջ 112, **Գևորգ Ջահուկյան**, ՀԱԲ, Եր., 2010, էջ 537:

նշված բառերում այդ մասնիկները դիտվում են աճականներ:

Աճականները բուն արմատից առանձնացվում են երկու սկզբունքով՝ 1) միննույն լեզվում տվյալ արմատի տարբերակներից վերջնահնչյուն (ներ)ի տարանջատումով (հմմտ. *լու-ռ* (լոել), *լու-բ* (լրատու), *լու-ս* (լսել). ըստ այդմ՝ բուն արմատն է՝ *լու-*, իսկ *ռ*, *բ*, *ս* հնչույթներն աճականներ են), 2) ցեղակից լեզուների համապատասխան ձևերի համեմատությամբ (հմմտ. հյ. *լոյծ* «հեղուկ, հեղուկային»⁴, հուն. *λόω* «արձակել, հալեցնել», լատ. *luō* «վճարել, հատուցել», *re-luō* «լուծել», սնսկ. *lunáti* «կտրել, հեռացնել», *lūna-* «կտրած», գոթ. *luna* «փրկանք», *lausjan* (-s աճականով) «արձակել, ազատել» և այլն, որոնց համար վերականգնվում են հ.-ե. **leu-/lou-* «կոտրել, խախտել» տարբերակային նախաձևերը: Ըստ այդմ՝ հայերեն բուն արմատը եղել է **լոյ-*՝ **լու-* հնչյունափոխ տարբերակով, իսկ *ծ*-ն աճական է:

Հյ. *մուկն* բառի ցեղակից ձևերն են. սնսկ. *mūh*, *mūš-ah* «մուկ», «առնետ», *mūšikā* «տղամարդու ձու» (*testiculus*), պրսկ. *mūš*, օսեթ. *myst* «մուկ», սողդ. *mwškyc* «վայրի կատու» (< **mūš-kuštar-* «մկների սպանող»), բելուջ. *mūšk*, ալբ. *mī*, հն սլավ. *mysī* /(*мышь*) «մուկ», ռու. *мышь*, լատ. *mūs*, հուն. *μῦς*, հն վրն գրմ., հն իսլնդ., հն անգլ. *mūs* «մուկ», անգլ. *mūs*, հոլլ. *muis*, աֆղան. *mažak*, քրդ. *mišk*, *məšik*, լեհ. *myszka*, գրմ. *Maus*, անգլ. *mouse* (< **mūs*)⁵: Համապատասխանությունների այս շարքը հիմք է տալիս անելու հետևյալ հաստատումները.

Ա) Հ.-ե. բոլոր լեզուներում անփոփոխ է մնացել միայն նախաձևի (**mūs/*mūš*) սկզբնահնչույթը՝ **m-*ն:

Բ) Բացառությամբ ալբաներենի, մյուս բոլոր՝ և՛ հին, և՛ ժամանակակից լեզուների ձևերը պահպանել են նախալեզվյան բառավերջի սուլականը՝ *s*, կամ էլ այն փոխարինել են սուլաչական (*s*, *š*, *ž*) կամ ետլեզվային (*h*) հնչույթային համարժեքով:

Գ) Եթե *centum* լեզուները պահպանել են հ.-ե. առաջնալեզվային սուլական *s*-ը, այսինքն՝ հարազատ են մնացել նախաձևին, ապա *satəm* լեզուներում այն կրել է զանազան փոփոխություններ, ընդ որում՝ հին հնդկերենում զարգացրել է նաև ետլեզվային շփական՝ *h*:

Դ) Հնդիրանական որոշ լեզուներում, ինչպես նաև սլավոնական ճյուղին պատկանող լեհերենում բառարմատին հաջորդում է հետնալեզվային խուլ հպական՝ միջնորդավորված ձայնավորով կամ առանց դրա (հմմտ. սնսկ. *mūšikā*, սողդ. *mwškyc*, բելուջ. *mūšk*, աֆղան. *mažak*, քրդ. *mišk*, *məšik*, լեհ. *myszka*), որը, անշուշտ, բառակազմական հավելում է՝ աժանց, բուն արմատին: Դա ակնհայտ է հատկապես հին հնդկերենի ձևերի համեմատությունից (հմմտ. սնսկ. *mūh*, *mūš-ah*

⁴ *Լոյծ*-ից են կազմվել *լուծանեմ* /*լուծեմ* «արձակել, քանդել» բայական ձևերը, որոնց կազմում կառանձնացվի *լուծ*- արմատական տարբերակը:

⁵ Ըստ Թ. Գամկրելիձեի և Վյաչ. Իվանովի **mūs* (տե՛ս Գամկրելիձե Թ. Վ., Իվանով Վյաչ. Վс., Индоевропейский язык и индоевропейцы, т. I, Тбилиси, 1984, էջ 531):

«մուկ», «առնետ», *mū'sikā* «տղամարդու ձու»)՝: Եթե այդ հետնալեզվային հպական հնչույթը՝ *k*-ն, լիներ միայն հնդիրանական ճյուղի լեզուներում, թերևս հիմքեր կլինեին կարծելու, որ հայերենի *մուկն* բառի *-կ*-ն (այսինքն՝ ոչ միայն *-ն* վերջնահնչյունը) նույնպես նախասկզբնական չէ, այսինքն՝ հետագա հավելում է բուն արմատին: Ըստ այդմ՝ հայերենը կլիներ երկրորդ լեզուն՝ ալբաներենի հետ միասին, որը պահպանած չէր լինի *h*-ե. արմատի վերջին հնչույթը:

Ե) Հայերեն *մուկն*-ի *-կ*-ի առկայությունը հնարավոր կլիներ իրանական ազդեցությամբ բացատրել, եթե այդ մասնիկը չունենար նաև լեհերենի բառաձևը: Մյուս կողմից, հայերենի *-կ*-ն իրանական փոխազդեցության արդյունք լինելու դեպքում ավելի հավանական է, որ լիներ փոխներթափանցում պարսկերենից, հատկապես՝ միջին պարսկերենից կամ պահլավերենից (պարթևերենից), որոնցից հայերենն ավելի շատ է ազդվել, քան իրանական որևէ այլ լեզվից, բայց, ինչպես տեսնում ենք, պարսկերեն բառաձևն այդպիսի վերջնահնչյուն չունի: Քիչ հավանական է, եթե չասենք՝ հավանական չէ հյ. *մուկն*-ի *-կ*-ն հնդիրանական վերոհիշյալ լեզուների ազդեցությամբ բացատրելը (այդ առումով լեհերենի մասին խոսք անգամ լինել չի կարող), քանզի նշված լեզուների և հայերենի միջև գործուն առնչությունների, մասնավորապես՝ բառակազմական և քերականական փոխազդեցությունների մասին հայտնի տվյալները նման դատողությունների համար գրեթե հիմքեր չեն տալիս⁷: Ի տարբերություն, օրինակ, *-շն* (*-šn*) վերջով բառերի (հմմտ. *բամբիշ*(ն) «թագուհի», *դաշն* «համաձայնություն, պայման», *կարշն* «ուժ, զորություն», *հանգուշն* «զգույշ, պարկեշտ»), որոնք իրանական փոխառություններ են, և որոնց *-շ* (*-š*), հաճախ՝ *-շն* (*-šn*) մասնիկը հավաստի կերպով անցել է միջին պարսկերենից, մասնավորապես՝ պահլավերենից⁸, *-kn* վերջածանց միջին պարսկերենն ու պահլավերենը (պարթևերենը) չունեին:

Զ) Ճիշտ չէ *մուկն* բառի *-կն* վերջի նույնացումը *արեզակն*, *արեւակն*, *արմուկն*, *դալուկն*, *դիակն*, *կայծակն*, *փայլակն*, *վանակն* (*վան* «բյուրեղ» բառից) բառերի *-ակն* // *-ուկն* բաղադրիչների հետ, որովհետև. 1) նշված բառերի *-ակն* // *-ուկն* մասնիկները ակնհայտորեն սկզբնարմատի (հմմտ. *արեզ-*, *արեւ-*, *արմ-*, *դալ-*, *դի-*, *կայծ*, *փայլ*, *վան*) մաս չեն կազմում, 2) այդ բառերի *-ակն* բաղադրիչները նույնարժեք չեն.

⁶ Հմմտ. Савченко А. Н. Сравнительная грамматика индоевропейских языков, М., 1974, էջ 180:

⁷ Հմմտ. Джаукян Г. Б. Сравнительная грамматика, էջ 202-203:

⁸ Նշված բառերի ստուգաբանությունը տե՛ս **Հր. Աճառյան**, ՀԱԲ, հ. I-IV, Եր., 1971-1979, **Գևորգ Չառուկյան**, ՀԱԲ: Թեպետև *խաշն* բառը ստուգաբանված չէ (տե՛ս **Հր. Աճառյան**, ՀԱԲ, հ. I, Եր., 1971, էջ 333, **Գևորգ Չառուկյան**, ՀԱԲ, էջ 317), սակայն բառի կառուցվածքը հուշում է, որ այն ևս, ըստ ամենայնի, իրանական փոխառություն է: Միջին պարսկերենը և պարթևերենն ունեին *-išn* (< **-šna-* < իրան. **-šna-*) վերջածանցը *-šn*, մանիք. *-yšn* հնչյունափոխված տարբերակներով, որոնք այդ լեզուների գործուն ածանցներից էին (տե՛ս «Основы иранского языкознания: Среднеиранские языки», М., 1981, էջ 67, 194):

երթե *արեգակն, արեւակն, փայլակն, վանակն* բառերում այն *ակն* «աչք, ակունք» բառն է⁹, ապա *դիակն, կայծակն* բառերի կազմում *-ակ(+ն)* կազմությամբ նվազական նշանակությամբ բառակազմական մասնիկ է, որն այլևս չի գիտակցվում որպես այդպիսին, ինչպես, օր., *մայրիկ, քույրիկ* բառերի կազմում որպես նվազական մասնիկ չի գիտակցվում *-իկ-ը, լճակ, ծովակ* բառերի կազմում՝ *-ակ-ը*, բայց դրանք դեռևս գիտակցվում են, օր., *փոքրիկ* (և՛ որպես գոյական, և՛ որպես ածական) և *աղջնակ* բառերի կազմում, 3) *դալուկն-ի -ուկ-ը* ածականակերտ ածանց է, ինչպես *խղճուկ-ի -ուկ-ը* (հմմտ. *խիղճ+ուկ*), իսկ *արմուկն-ի -ուկ-ի* նշանակությունը մթազանաձ է¹⁰:

Կարծում ենք՝ տեսականորեն մնում է *մուկն-ի կ-ի* ստուգաբանության երկու հավանական վարկած:

1) Հյ. *կ-ն* նույնպիսի հավելում է բառակազմական մասնիկ (աճակա՞ն), ինչպես հնդիրանական վերոհիշյալ լեզուներում և լեհերենում: Այս տարբերակի դեպքում ենթադրելի է, որ տեղի է ունեցել նախնական **s*-ի անկում, որի տեղը գրավել է *-կ* (k)-ն: Ավելի ուշ *-ուկն* վերջով բառերի համաբանությամբ ավելացել է նաև *-ն*-ն: Անկախ *-կ-ի* ծագումնաբանությունից, *-ն* ձայնորդահանգը, ըստ ամենայնի, ավելացել է *ն* հիմքով բառերի հոլովական համաբանությամբ (հմմտ. եգ.թ.՝ *ձուկն-ձկան*- ... ձկամբ, հգն.թ.՝ *ձկունք-ձկանց* ... ձկամբբ, եգ.թ.՝ *դուռն-դրան* ...դրամբ, հգն.թ.՝ *դրունք / դուրք-դրանց* ...դրամբբ / դրամբ, եգ.թ.՝ *հարսն-հարսին*- ... *հարսամբ*, հգն.՝ *հարսունք-հարսանց*- ... *հարսամբբ* են): Նախաձևի երկար **ū*-ն *ou* երկբարբառակերպի է անցել, թերևս, **ou* երկբարբառի միջանկյալ աստիճանով (հմմտ. **ū* > **ou* > *ou* (*ու*)): Ըստ էության, այդպիսին են նաև *h.*-ե. **mūs* > անգլ. *mouse* [*maus*], գրմ. *Maus*, հոլ. *muis* անցումները: Հյ. *-կ* (k)-ն, սակայն, առաջացել է ոչ թե հնդիրանական լեզուների ազդեցությամբ, այլ ինքնուրույնաբար, ինչպես լեհերենում: Այս վարկածի մեջ, սակայն, մեզ հավանական չի թվում հենց *-կ-ի* առաջացման տարբերակը, որովհետև, ինչպես նշել ենք վերևում, դրա համար բավարար հիմքեր չկան:

2) Դեռևս վաղ նախահայերենյան, ըստ ամենայնի՝ վաղնջահայերենի փուլում տեղի է ունեցել *h.*-ե. **s* > *hj.* *կ* (k) անցում: Կարծում ենք՝ այս վարկածի դեպքում երկրորդական չէ *h.*-ե. ծագման *-(ու)կն / -գն / -քն* վերջերով բառերի (հմմտ. *ակն, արմուկն, թէկն (/թեկն), ծունկն (/ծունգն), ձուկն, ունկն, սունկն (/սունգն)*) *-կ-ի* ստուգաբանության հարցը՝ տիպաբանական միտումի բացահայտման առումով, եթե այդպիսին կա: Իհարկե, դա դեռևս չի նշանակում, թե այդ միտումն ինքնա-

⁹ Հմմտ. Անտուան Մեյե, նշվ. աշխ., էջ 209-211:

¹⁰ Արմատն է *արմ*, որը, ըստ Հ. Հյուբշմանի և Հ. Աճառյանի, սերում է *h.*-ե. **arm*-«բազուկ, նախաբազուկ» արմատից (տե՛ս Հայնրիխ Հյուբշման, նշվ. աշխ., էջ 425, Հր. Աճառյան, ՀԱԲ, I, էջ 329), իսկ ըստ Գ. Ջահուկյանի՝ **ar-mo*- (Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 112), **ar*-(*ə*)-*ma*՝ **ar*-«հարմարեցնել» արմատական տարբերակներից (տե՛ս Գևորգ Ջահուկյան, ՀԱԲ, էջ 93):

բերաբար կիրառելի է նաև *մուկն*-ի *-կ*-ի վերաբերյալ: Հիմք ընդունելով նշված բառերի համար վերականգնվող նախաձևերը (հմմտ. **ok^m-n-* > *ակն*, **ar-(ə)-ma-* / (**ar-mo-*) > *արմ*-(*ուկն*), **(s)toigu-no-* / **(s)teigu-* «ուս, թև, ազդր» > (**թէկն*) > *թէկն*, **g'on-ui-* / **g'enu-* (երկ. թ. **g'on-g-*) > *ծուկն* / (>*ծուկն*), **g'hjū-/*g'h(i)ū-kon-* (?) > *ձուկն*, **ous-/*aus-/*us-* // (**us-on-ko-m-* ?) > *ուկն*, **sp(h)ong-os* / **psong-* > *սուկն* (/ *սուկն*)), կարելի է ասել, որ *-կ* (/ *զ*)-ն ա) *ակն*, *թէկն* (*թէկն*), *սուկն* (*սուկն*) բառերում ակնհայտորեն արմատի բաղադրիչ է **k^m/*k/*g* > *կ(զ)* անցումներով, բ) մյուսներում՝ *ծուկն* / (>*ծուկն*), *ձուկն*, *ուկն*, բառակազմական մասնիկ է, որը սերում է, թերևս, հ.-ե. **-ko*, **-k* (/ *-ek*) ածանցներից¹¹:

Հիմնահարցի քննության առումով կարևոր է նաև այն իրողությունը, որ բառարմատի բաղադրիչ են ոչ միայն *-կն* վերջով բառերի մի մասի *-կ*-ն, այլև վերջնահանգ *-ն*-ին նախորդող ուրիշ բաղաձայններ՝ բազմաթիվ այլ բառերում (հմմտ. ուրարտ. *burgana* > հյ. *բուրգն*, **dhōrg-* / **dhregh-* «վազել» > հյ. *դուրգն*, **dhur-* «դուռ» > հյ. *դուռն*, **e-nongh-/*ongh-li-* > **longh-* (?) > հյ. *եղուկն*¹², **srung-* > հյ. *ռուկն*¹³, **sue-* / **s(e)ue-* > հյ. (*քե-*) > (*ին-ք-ն*) > *ինքն*¹⁴, **prk-/*perk-* > հյ. *հարսն*, **lukon-* // **leuk-* «լուսավորել, լուսավոր» > հյ. *լուսն* «ակնաբիծ» նն), իսկ փոխառյալ բառերում դրանք առկա են փոխատու լեզվի բառաձևում (հմմտ. հուն. *μαρτύριον* «վկայարան» (< *μάρτυρος* «վկա, նահատակ») բառից՝ *մարտուռն*, *ք*-ի անկումով՝ *մատուռն* «նահատակի վրա կառուցված փոքրիկ տաճար»¹⁵, իրան. ավ. *vasna* «կամքով», հ.պ. *vašnā* «կամքով», պրթ. *vasnād* «պատճառով, համար», սողդ. *vás²n* «համար, պատճառով» – հյ. *վասն* «մասին, համար»): Միաժամանակ, համեմատական քերականությունից հայտնի է, որ, իբրև կանոն, պատմահամեմատական մեթոդը հնարավորություն է տալիս վերականգնելու միայն այն բառերի ամբողջական բառային նախաձևերը, որոնք գոնե մի քանի ցեղակից լեզվում պահպանվել են ամբողջական բառաձևերով: Ավելի հաճախ պատմահամեմատական մեթոդը հնարավոր է դարձնում միայն ձևությունների վերականգնումը¹⁶: Ինչպես ակնհայտ է ցեղակից լեզուների պահպանված ձևերից,

¹¹ Հմմտ. Савченко А. Н., նշվ. աշխ., էջ 180:

¹² Նաև **nogho-* «եղունգ, ճիրան, մագիլ, ոտք». հմմտ. հուն. *ὄνξ*, *ὄνχος* «եղունգ, ճիրան», լատ. *unguis* «եղունգ», հն վրն գրմ. *nagal*, լիտվ. *nagas* «եղունգ», *nagā* «ամբակ», հն պլավ. *noga*, *nogūti* (տե՛ս Семе́ренъи О., նշվ. աշխ., էջ 72):

¹³ Այս բառի հ.-ե. ծագումն ընդունվում է որոշ թեականությամբ (տե՛ս Հայերիիս Հյուբշման, նշվ. աշխ., էջ 486, Հր. Աճառյան, ՀԱԲ, IV, Եր., 1979, էջ 147-148, Գևորգ Չահուկյան, ՀԱԲ, էջ 658):

¹⁴ Ստուգաբանությունն ըստ՝ Գևորգ Չահուկյան, ՀԱԲ, էջ 286: Հ. Աճառյանը չի ստուգաբանում (տե՛ս Հր. Աճառյան, ՀԱԲ, II, Եր., 1973, էջ 245-246):

¹⁵ Տե՛ս Հայերիիս Հյուբշման, նշվ. աշխ., էջ 363, Հր. Աճառյան, ՀԱԲ, II, էջ 271, Գևորգ Չահուկյան, ՀԱԲ, էջ 514:

¹⁶ Տե՛ս Савченко А. Н., նշվ. աշխ., էջ 13-14: Հայտնի է, որ Ա. Մեյեն հնարավոր է համարել միայն ցեղակից ձևերի միջև համապատասխանությունների հաստատումը, բայց ոչ նախալեզվի (հմմտ. «Հնդեվրոպական լեզուն վերականգնել հնարավոր չէ»), հետևաբար՝ նախաձևերի, տվյալ դեպքում՝ հնդեվրոպականի վերականգնումը (տե՛ս Meïe A.,

դրանցում, բացառությամբ այբաներենի, առկա է հ.-ե. **mūs*-ի «մուկ» **-s* վերջնահնչյունի ներկայացուցիչը անհնչյունափոխ կամ հնչյունափոխված, անկախ այն բանից՝ դրան հաջորդում է հավելյալ *-k* (աճակա՛ն), թե՛ ոչ: Հավելյալ *-k* (նաև այլ հնչյուններ) առկա է միայն այն բառաձևերում, որոնցում պահպանված է նաև արմատի վերջնահնչյունը՝ *-s*, *-s*, *-s*, *-z*: Հետևաբար տիպաբանական առումով ևս ավելի հավանական է, որ հայերենի բառավերջի *-k*-ն, այնուամենայնիվ, արմատի բաղադրիչ է, այսինքն՝ հ.-ե. **-s*-ի ներկայացուցիչը, այլ ոչ թե՛ ածանց կամ աճական:

Ինչպես վերը տեսանք, հ.-ե. բառավերջի **-s*-ը հայերենի գոյականի և անձնական դերանվան հզն. թ. անվանական հոլովաձևում անցել է հետնալեզվային շնչեղ խուլ հպականի՝ *-p* (*k*), այսինքն՝ դարձյալ հետնալեզվային հպականի: Մի բան, որի հավաստիությունը հայագիտության մեջ առնվազն վերջին հարյուրամյակի ընթացքում ոչ ոք հարցականի չի ենթարկել:

Մեզ հետաքրքրող հարցի տեսանկյունից կարևոր նշանակություն ունի նաև *ménkén* և սրա հզն. ուղղ. ձևը համարվող *ականջ*-(*p*) բառերի *-k*-ի ծագումնաբանությունը:

Ունկն-ի հ.-ե. նախաձևի՝ **aus-* «ականջ», **-s* վերջնաբաղադրիչը պահպանվել է հուն. *αὐς* (դոր. հուն. *ᾠς*), *ἀκούω* «լսել», լատ. *auris* (< **ausis*. հմմտ. *auscultō* «լսել»), գոթ. *ausō*, լիտվ. *ausis*, հն պրուս. *ausins*, ավ. *uši* (երկակի թ.), նաև «խելք, հասկացողություն», ավր. *veš*, հնսլավ. *ucho* (սեռ. *ušese*, *uši*), չեխ. *uši* (երկակի թ.), ռու. *ucho* [*uxo*], *yusu* [*ušī*], պրսկ. *hōš* «խելք, միտք»: Գերմանական լեզուների մի մասում գործել է ռոտացիզմի սկզբունքը՝ **s > r* (հմմտ. հն բրձ. գրմ. *ōra*, գրմ. *Ohr*, անգլ. *éare*, հն անգլ. *ēare*, անգլ. *ear*, հոլ. *oor*)¹⁷: Բառավերջի **-s*-ը չի պահպանվել կելտական լեզուներում (հմմտ. հն իռլնդ. *au*, *ō*): Թ. Գամկրելիձեն և Վյաչ. Իվանովը «ձևային առումով» **aus-* հիմքին են վերագրում նաև «ստուգաբանորեն ոչ պարզ ինթական *aus-* [*aus-*] «տեսնել» բայական ձևը», որը ներկայի եզ. թ. 1-ին դ. ունի *uħhi* «լում եմ» և պրետերիտի¹⁸ եզ. թ. 1-ին դ. *uħhun* «լսեցի» ձևերը, այսինքն՝ հ.-ե. **-s*-ի փոխարեն հետնալեզվային *h* [*x*]¹⁹: Կարծում ենք՝ ինթական *aus-* «տեսնել» բայի առնչությունը հ.-ե. **aus-* «ականջ» գոյականի հետ նույնքան ակնհայտ

Введение в сравнительное изучение в индоевропейских языков, М., 1938, М.-Л., էջ 73-74, 79):

¹⁷ Գերմանական լեզուներում ռոտացիզմի երևույթը, այն է՝ **s > (z >) r*, ինչպես և հ.-ե. պարզ խուլերի՝ **p*, **t*, **k*-ի անցումը պարզ ձայնեղների՝ **b*, **d*, **g*, բացատրվում է ըստ Վեռների *օրենքի* (տե՛ս **Прокош Э.**, Сравнительная грамматика германских языков, М., 1954, էջ 52-55, 79, «Сравнительная грамматика германских языков», т. 2, М., 1962, էջ 20-22, 208-214, «Лингвистический энциклопедический словарь» (այսուհետև՝ **ЛЭС**), М., 1990, էջ 83):

¹⁸ լատ. *praeteritus* «անցյալ, անցած» բառից: Սովորաբար պատմողական գործառույթով «համադրական անցյալ» ժամանակաձև, իսկ եթե տվյալ լեզվում կա անցյալի իմաստ արտահայտող մի քանի քերականական ժամանակ *անկատար անցյալ* (լատ. *imperfectum*), *կատարյալ* (լատ. *perfectus*), *աորիստ* (հուն. *ἀοριστος* / *aoristos*) ևն, ապա *պրետերիտ* տերմինով նշանակվում է դրանց ամբողջությունը (տե՛ս **ЛЭС**, էջ 396):

¹⁹ **St** u **Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. Вс.**, նշվ. աշխ., հ. II, էջ 786:

է, որքան վերոհիշյալ մյուս ձևերի, որոնցից, օրինակ, իրանականները (հմմտ. ավ. *uši* «1. երկու ականջները, 2. խելք, հասկացողություն», պարսկ. *hōš* «խելք, միտք») նույնպես իմաստաբանորեն հեռացել են նախաձևից: Ըստ իս, հոգուտ այդ տեսակետի է վկայում հետևյալ օրինակը. հ.-ե. **uēid-* -ից «տեսնել» առաջացել է **uōida* «(ես) գիտեմ» կատարյալը, որից էլ սերել են հն հնդկ. *véda*, հն հուն. *οἶδα*, գոթ. *wait* ձևերը, որոնք նշանակում են «(ես) գիտեմ», իսկ **uēid-* -ից է առաջացել լատինական կատարյալի *vīdi-*ն (**ei* > *ī* անցումով), որը նշանակում է «(ես) տեսա»²⁰: Այսինքն՝ գիտենալու իմաստը զարգացել է տեսնելու, հետևաբար՝ ճանաչելու հիմքի վրա՝ «տեսնել→ճանաչել→գիտենալ» իմաստային անցումներով: Ըստ այդմ՝ պարզ է դառնում, որ խեթ. *aus-* -ը «տեսնել» հ.-ե. **aus-* -ի «ականջ» դրսևորման ձևերից է՝ հետագա վերաիմաստավորումով: Կարևոր է նաև այն իրողությունը, որ խեթ. *aus-* -ի ներկայի և պրետերիտի խոնարհման ձևերում հիմքի *-š-*ն, *h-*ից բացի, ներկայում հանդես է գալիս նաև *t*, *y* հերթագայական տարբերակներով (հմմտ. *autti* (եզ.թ., 2-րդ դ.), *autteni* (հզն. թ., 2-րդ դ.), *uḫanzi* (հզն. թ., 3-րդ դ.))²¹: Հայտնի է, որ հ.-ե. **u-*ն բառասկզբի դիրքում հայերենում անցել է *q* (g)-ի (հմմտ. **uoid-* > (*q̄tun-*)> *q̄hun-*(եմ)): Այս օրինակը, որն ուղղակի կապ չունի **-s* > *h*յ. *h(k)* հնարավոր անցման հետ, անուղղակիորեն վկայում է, որ առաջնալեզվային (տվյալ դեպքում՝ երկշրթնային) հնչույթից անցումը հետնալեզվայինի սկզբունքորեն հնարավոր երևույթ էր²²:

Վերոհիշյալ դիտարկումները հիմք են տալիս հետևյալ հաստատումների համար. Ա) հ.-ե. **aus-* -ի «ականջ» **-s-* ն ցեղակից լեզուներում ներկայացված է ինչպես առաջնալեզվային (*s* /*ç*/, *š* /*u*/, *r*), այնպես էլ հետնալեզվային (*h* [*x*]՝ խեթերենում, *x* [*x*]՝ պլավոնական լեզուներում, *κ*՝ հին հունարենում) համապատասխաններով: Դա նշանակում է՝ հայերենը միակ լեզուն չէ, որը հ.-ե. առաջնալեզվային շփական **-s-* -ի փոխարեն ունի հետնալեզվային բաղաձայն, ավելին՝ հենց հետնաքմային խուլ հպական *h* (*k*): Հունարենի օրինակները վկայում են *s//k* հերթագայության մասին, որը, ըստ ամենայնի, տեղի է ունեցել նաև հին հայերենում հնդեվրոպական միասնությունից անջատվելուց հետո: Բ) Երկու կարգի համապատասխանություններն էլ ներկայացնում են լեզուների ինչպես *centum*, այնպես էլ *satəm* խմբերը, հետևաբար այդ երևույթն ունի ընդհանուր հնդեվրոպական բնույթ, այլ ոչ թե՛ բարբառախմբային: Գ) Հյ. *nínkén-*ի հ.-ե. ցեղակիցներից և ոչ մեկը բառավերջի **-s-* -ը ներկայացնող բաղաձայնից (հմմտ. *s*, *š* /*u*/, *r*, *k*, *x* [*x*])

²⁰ Stéu Савченко А. Н., նշվ. աշխ., էջ 281:

²¹ Stéu Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. Вс., նշվ. աշխ.:

²² Stéu Վարդան Պետրոսյան, Հին հայերենի ձայնեղ հպականների տարածմանակյա բնութագրերը // «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», 2019, թիվ 1 (28), էջ 45-46:

առաջ *-n-* /(-ն-) չունի. այդ *-ն* -ն չունի նաև *ունկն*-ի երկակին համարվող գրաբարյան *ականջ*-(*p*) ձևը, բայց այն կա արդի հայերենի բարբառների զգալի մասում (հմմտ. *անգուճ* / *անջուզ* (Ղրբ.)²³, *անգաջ* (Առտ., Պոլս.)²⁴, *անգոճ* (Ն.-Ջուղ.)²⁵, *անգաճ* / *հանգաճ*²⁶ / *անգաջ* / *անջակ* (Ար.)²⁷, *օնգօջ* (Հմշն.)²⁸, *անգէջ* (Ջյթ.)²⁹, *անգանջ* (ՀՃ.), *յանգանջ* (Կրն.)³⁰, *անգաջ* «ականջ», հգն. թ.՝ *անգջվի* (Մաս.)³¹, *անգուճ* (Մեղ.)³², *անջիկ* (Ուրմ.)³³): Ըստ Հ. Աճառյանի և Է. Աղայանի՝ *կ/(զ) – ն* դրափոխությունը հետգրաբարյան երևույթ է, քանի որ արդի հայերենի բարբառներն ընդհանուր առմամբ հետգրաբարյան իրողություններ են³⁴:

Սկզբունքորեն համամիտ լինելով վերջին կարծիքի հետ՝ պիտի նշենք, որ *ունկն*-ի և *ականջ*-ի հ.-ե. հնարավոր նախաձևերում, նույնիսկ իբրև բարբառային (իմա՝ տարածության/արեալային) իրողություն, բառասկզբի ձայնավորի՝ **a-/*ō-/*ə-/*u-* և բառավերջի բաղաձայնի՝ **-s* միջև **-n-* (/(-ն-)) բաղադրիչի վերականգնումը հազիվ թե կարող է արդարացված լինել: Ոչ պակաս կարևոր է նաև այն, որ նշված դրափոխությունը, բնորոշ լինելով զգալի թվով բարբառների, այնուամենայնիվ, համընդհանուր երևույթ չէ (հմմտ. *ականջ* (Վն, Մկք), *աճանջ* (Ոզմ.)³⁵, *ազանջ* (Սվեղ.)³⁶), իսկ, օրինակ, Կարնո բարբառում *ն*-ն կրկնվում է *յանգանջ*: Կարծում ենք՝ ասվածը հիմք է տալիս պնդելու, որ 1) *ունկն*-ի առաջին *-ն*-ն չի եղել արմատի նախասկզբնական ձևում, և արմատն ունեցել է **ուկ-* (/ **uk-*) կազմը, որը, ըստ ամենայնի, սերել է հ.-ե. **ōus-* կամ **us-* նախաձևից, 2) *ականջ*-ի *ակ*-ը սերել է **aus-* կամ **ōus-* նախաձևից՝ **u-*-ի անկումով կամ **au* / **ōu* երկբարբառ(ներ)ի մեներբարբառացումով և արտացոլում է ավելի հին վիճակը, քան *ունկն*-ի **ունկ-* ձևն է, 3) նախահայերենյան **ակ-* (*ականջ*-(*p*)) և **ուկ-* (*ունկն*) արմատների սկզբնային ձայնավորները՝ *ա* (*a*), *ու* (*u*), միևնույն ձայնդարձի տարբեր աստիճաններն են, այսինքն՝ գործ ունենք միևնույն ար-

²³ Տե՛ս Հ. Աճառեան, Քննություն Ղարաբաղի բարբառին, Վաղարշապատ, 1899, էջ 129:

²⁴ Տե՛ս Հ. Աճառյան, Քննություն Առտիայի բարբառի, Եր., 1953, էջ 257, նույնի՝ Քննություն Պոլսահայ բարբառի, Եր., 1941, էջ 183:

²⁵ Տե՛ս Հ. Աճառեան, Քննություն Նոր-Ջուղայի բարբառի, Եր., 1940, էջ 140:

²⁶ *Անգաճ* ձևն ունի Արարատյան բարբառի Լոռու (տե՛ս Մ. Ասատրյան, Լոռու խոսվածքը, Եր., 1968, էջ 176), իսկ *հանգաճ*-ը Գառնիի խոսվածքը:

²⁷ Տե՛ս Ռազմիկ Մարկոսյան, Արարատյան բարբառ, Եր., 1989, էջ 296:

²⁸ Տե՛ս Հ. Աճառյան, Քննություն Համշենի բարբառի, Եր., 1947, էջ 219:

²⁹ Տե՛ս Հրայրյա Աճառյան, Քննություն Գիլիկիայի բարբառի, Եր., 2003, էջ 295:

³⁰ Տե՛ս Մ. Մկրտչյան, Կարնո բարբառը, Եր., 1952, էջ 41:

³¹ Տե՛ս Վ. Ա. Պետոյան, Մասունի բարբառը, Եր., 1954, էջ 102:

³² Տե՛ս Էդ. Աղայան, Մեղրու բարբառը, Եր., 1954, էջ 260:

³³ Տե՛ս Մ. Ե. Ասատրյան, Ուրմիայի (Խոյի) բարբառը, Եր., 1962, էջ 191:

³⁴ Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս II, Եր., 1951, էջ 362-439, Агаян

Э. Б., О генезисе армянского консонантизма // «Вопросы языкознания», 1960, № 4, էջ 37-52:

³⁵ Տե՛ս Հ. Աճառյան, Քննություն Վանի բարբառի, Եր., 1953, էջ 242:

³⁶ Տե՛ս Հրայրյա Աճառյան, Քննություն Գիլիկիայի բարբառի, էջ 558:

մատի հերթագայական տարբերակների հետ (հմմտ. **aus-/*ōus-/*us-*), այլ ոչ թե տարբեր արմատների. դրա վկայություններն են նաև ցեղակից լեզուների համապատասխան ձևերի (հմմտ. հուն. *ᾠς*, դոր. հուն. *ᾠς*, *auris* (լտ.), *ausō* (գոթ.), *ausis* (լիտվ.), *uši* (ավ.), *ucho*, *ušn*. *ušese* (հն ավվ.)) *au* (*av*) // *ō* (*o*) // *u* (*y*) հերթագայությունները, 4) *ականջ*-ը եղել է երկակիի ձևը և ավելի ուշ, ստանալով հոգնակերտ *-p* (*-k'*) մասնիկը, գործածվել է հոգնակիի նշանակությամբ, հնարավոր է՝ «կաթսայի բռնակ» նշանակության հետ նույնացվելուց խուսափելու համար³⁷, 5) *ական*- ձևն առաջացել է *-ն* հիմքով բառերի հոլովման համաբանությամբ (հմմտ. *ակն* «աչք» - *ական* (եգ.թ., սեռ.-տր. հլ.), *երկն* «ծննդյան ցավեր» - *երկան*, *թեկն* /(*թէկն*) «բազուկը ուսի հետ միասին» - *թիկան*, *ձուկն* - *ձկան* նն), 6) *ականջ*-ի ջ-ի ստուգաբանությունը խնդրահարույց է: Ա) Ըստ Ա. Մեյեի և Ն. Աճառյանի՝ *ականջ* ձևն առհասարակ առաջացել է *աչ-* ի՝ որպես *ակն*-ի երկակիի ձևի համաբանությամբ, այսինքն՝ նախապես եղել է **ականջ-*, որի չ-ն նախորդող *-ն*-ի առնմանությամբ վերածվել է ձայնեղ ջ-ի³⁸: Բ) Գ. Ջահուկյանը, հիմնվելով հ.-ե. արմատի կառուցվածքի մասին Է. Բենվենիստի տեսության վրա, ավելի հավանական է համարել, որ *ականջ*-ի ջ-ն կարող էր առաջանալ հ.-ե. **-er/*-en* հերթագայական տիպին ենթարկվող բառերի մի մասի համաբանությամբ, որոնց բառավերջի *k*, «հատկապես *g*» հետնալեզվային հպականը, օր., սանակրիտում կարող էր անցնել առաջնալեզվային հպաշփական *j* [*j*]-ի (հմմտ. *ásrk*՝ անվն.-հյց. // *asrjah*՝ սեռ. / *asrjā*՝ գրծ.): Ընդ որում, ոչ հազվադեպ հետնալեզվայինի փոխարեն հանդիպում է առաջնալեզվային *d* կամ *t* (**-n-t-* խմբի կազմում)՝ առանց իմաստային տարբերակում առաջացնելու, որը Է. Բենվենիստին հիմք է տվել ասելու, որ «... **-t-*ն ոչ թե «ձևույթ է» (հնչույթաբանական իմաստով), այլ միայն որոշ բաղաձայնական վերջավորությունների պատահական հենակետ, այլ կերպ՝ աճական»³⁹: **K/*g* (նաև **d/*t*) > *j* [*j*] անցումը կարող է լինել քմայնացման հետևանք, որը նշանակում է, որ այդ հպականներին պիտի հաջորդեր փափուկ ձայնավոր (*i*, *e*) կամ կիսաձայն (*i*): Ըստ այդմ՝ Ժ. Դյումեզիլը *ականջ*-ի համար առաջարկել է **ankan* < **ankan-jo/ā-* նախաձևը⁴⁰:

Ինչպես նշել ենք հպաշփականների տարածամանակյա քննության առնչությամբ, հյ. ջ կարող էին տալ ոչ միայն «հետնալեզվային/ատամնային հպական ձայնեղ/խուլ + *j*» հաջորդականությունները՝ շրթնահետնաքմային (**g^h/h*), շնչեղ և ոչ շնչեղ տարբերակներով (հմմտ. **gh*, **dh*, **d*, **t*, **k*), այլև՝ միայն կիսաձայն *j*-ն⁴¹: Այդ առումով Ժ. Դյումեզիլի առաջա-

³⁷ «Կաթսայի բռնակ» նշանակությամբ *ուկն*-ի հզն. է *ուկունք*:

³⁸ Տե՛ս Անտուան Մեյե, նշվ. աշխ., էջ 226, Հր. Աճառյան, ՀԱԲ, I, էջ 104:

³⁹ Бенвенист Э., Индоевропейское именное словообразование, М., 1955, с. 52-55: Ընմտ. Գ. Ջահուկյան, Հին հայերենի հոլովման սիստեմը ..., էջ 193:

⁴⁰ Տե՛ս Джаукян Г. Б. Сравнительная грамматика ..., էջ 222, ծնթ. 60:

⁴¹ Տե՛ս Վարդան Ջ. Պետրոսյան, Հին հայերենի հպաշփականների ծագումը //

րկությունը տրամաբանական է, սակայն, մեր կողմից վերը նշված վերապահումով, ըստ որի՝ նախաձևում բացառվում է **-n-* -ի առկայությունը հպական *k-*ին նախորդող դիրքում, այսինքն՝ **ank-* (**անկ-*) արմատական ձևը: Ըստ իս՝ ավելի հավանական է, որ *ականջ-(ք)-ի* ջ-ն լինի սեռ.-տր. հոլովների ցուցիչ, որն այդ բառին է անցել անկանոն հոլովման ենթարկվող *գիւղ* և *կին* բառերի եզ. սեռ.-տր.-ի (հմմտ. *գեղ-ջ* «գյուղի», *կնո-ջ* «կնոջ» (սեռ.-տր.)) և *n-w* խառն հոլովման ենթարկվող *-ի* վերջով որոշ բառերի տր. հլ. (հմմտ. *այգի-այգւ-ն-ջ* «այգու(ն)», *կղզի-կղզւո-ջ* «կղզու(ն)», *տամալի* «հարթ տանիք» – *տամալւ-ն-ջ* «տանիքի(ն)», *տարի-տարւ-ն-ջ* «տարվա», *տեղի-տեղւ-ն-ջ* «տեղի(ն)») համաբանությամբ: Երկրորդ տիպի բառերը, որոնք տրականը կազմում էին նաև *-ւոյ* վերջով (հմմտ. *այգ-ւոյ, կղզ-ւոյ, տամալ-ւոյ, տար-ւոյ, տեղ-ւոյ*), եզ. Ներգոյականը կազմում էին բացառապես *-ջ* վերջով (հմմտ. *յայգւոջ* «այգում», *ի կղզւոջ* «կղզում», *ի տամալւոջ* «տանիքում», *ի տարւոջ* «տարում», *ի տեղւոջ* «տեղում»): Հոգուտ այս տեսակետի են վկայում բարբառային *յանգանջ* (Կրն) և *հանգաճ* (Ար.) ձևերը, որոնք, ըստ իս, նախապես արտահայտել են եզ. թ. ներգոյական հոլովի իմաստ՝ «ականջի մեջ»: Բառակազմի *յ-*ն նախդիր է (*h-*ն հին *յ-*ի աշխարհաբարյան (/բարբառային) հնչյունափոխությունն է), իսկ *ական-* -ը եղել է սկզբնական **ակ-* արմատի սեռ.-տր.-ի ձևը, որին ավելացել է *ջ* հոլովակերտը, այն է՝ *ական + ջ*: Այդ ձևով այն արտահայտել է երկ. թ. ուղղ. հլ. իմաստ: Ավելի ուշ *-ք* հոգնակերտի հավելումով այդ կազմությունն ընկալվել է իբրև հզն. ուղղ. ձև:

Վերոհիշյալ քննությունը հիմք է տալիս նաև ասելու, որ *ունկն-*ի համար Հ. Օստհոֆի առաջարկած **us-on-ko-m* նախաձևը նույնպես չի կարող ընդունելի լինել⁴²:

Հին հայերենի *մուկն*, *ունկն* և *ականջ* բառերի վերոշարադրյալ քննությունը հիմք է տալիս ասելու հետևյալ հիմնական եզրակացությունները.

1) Եթե հին հայերենի *ն* ձայնորդահանգով բառերի վերջին *-ն* իսկապես հայկական ծագում ունի, ապա նույնը չի կարելի ասել նրան նախորդող բոլոր բաղաձայնների, մասնավորապես՝ *մուկն*, *ունկն* և *ականջ-(ք)* բառերի *-կ-* -ի մասին: Մեր քննության համաձայն՝ այդ բառերի *-կ-* ն սերում է, համապատասխանաբար, հ.-ե. **mūs* և **aus-* (**ōus-//*us-*) նախաձևերի **-s-* -ից, ինչպես և ցեղակից լեզուների առաջնալեզվային (*s* /*ç*/, *š* /*ʃ*/) կամ հետնալեզվային (*h* [*x*], *x* [*x*]) շփական համարժեքները, լատիներենի թրթռային *r-*ն (*auris* «ականջ») և հունարենի հպական *κ* (*k*)-ն (*ἀκούω* «լսել»):

ՎԷՄ, 2020, թիվ 3 (71), էջ 205: Հմմտ. նաև **Հուլգեր Պեդերսոն**, Հայերեն եւ դրացի լեզուները, Վիեննա, 1907, էջ 101:

⁴² Տե՛ս **Գ. Ջահուկյան**, Հին հայերենի հոլովման սիստեմը ..., էջ 192: Հլ. *ունկն-*ի առաջացման համանման բացատրություն են առաջարկել նաև Հ. Հյուբշմանը (տե՛ս **Հայերի ձայնաբանություն**, նշվ. աշխ., էջ 484), Ա. Մեյեն և Է. Բենվեդիստը (**Անտուան Մեյե**, նշվ. աշխ., էջ 226):

2) Ականջ(-ք)-ի բուն արմատն է *ակ*-ը, որը սերել է **aus-* կամ **ōus-* նախաձևից՝ **-u-*-ի անկումով կամ էլ պարզապես **au/*ōu* երկբարբառ(ներ)ի մենաբարբառայնացումով:

3) Ունկ- -ի **ուկ-* (**uk-*) և *ականջ*- -ի **ակ-* արմատներն արտացոլում են միևնույն ձայնդարձի տարբեր աստիճանները, որոնք, վաղ նախահայերենի փուլում ենթարկվելով նաև այլ փոփոխությունների (վերջնահանգ *-ն*-ի հավելում, *-ն*-ի դրափոխություն) զգալիորեն հեռացել են միմյանցից:

4) Առավել հավանական է, որ *ականջ*- -ի *-ջ*-ն առաջացել է հին հայերենում սեռ.-տր. և ներգ. հլ. ձևերը *-ջ* վերջով կազմող գոյականների համաբանությամբ (հմմտ. *այգի-այգւոջ-(յ)այգւոջ, տեղի-տեղւոջ-(ի)տեղւոջ* և այլն): Այդպես մտածելու հիմք են տալիս, մասնավորապես, «ականջ»ի արդի հայերենի որոշ բարբառներում պահպանված *հանգաճ, յանգանջ* տիպի ձևերը, որոնք, պիտի կարծել, նախապես արտահայտել են եզ. թ., ներգ. հլ. նշանակություն, այն է՝ «ականջում», և ավելի ուշ միայն ընկալվել են որպես եզ. թ. ուղղ. հլ. ձևեր:

Բանալի բառեր – *մուկն, ունկն, հ.-ե. նախաձևեր, բարբառային ձևեր, և ձայնորդահանգ, խուլ շփականներ, հ.-ե. *s > հլ. կ (k) անցում*

ВАРДАН ПЕТРОСЯН – Этимологические наблюдения (մուկն, ունկն, ականջ(-ք)). – Начиная с Г. Гюбшмана лингвисты приписывали армянское происхождение не только последнему *-ն* (-n) в древнеармянских словах, оканчивающихся на сонорный (*ակն, արմուկն, բեռեկն, դարուկն, ծունկն, ձուկն, մուկն, ունկն* ևն), но и предшествующему глухому смычному. Соответственно *կ* считалось словообразовательной частицей, в частности детерминативом. Однако этимологический анализ показывает, что по крайней мере относительно *կ* в словах *մուկն, ունկն* и форме множественного числа последнего *ականջ(-ք)* отмеченная точка зрения неубедительна. В выделенных словах *կ* является формой составляющей основы слова *մուկն*. Первоначальной основой *ունկն* было **ուկ-*, а *ականջ*-՝ **ակ-*, переход и.-е. **s* в арм. *կ* (k) с типологической точки зрения обосновывается тем, что в некоторых из и.-е. языков **s* представлен заднеязычным глухим фрикативным *x* [*x*] (др/слав., рус.), *h* [*x*] (хетт.), а в греческом, как и в армянском, также и глухим смычным *κ(k)* - *ἀκούω* “слушать”. Вначале *ականջ* являлось формой двойственного числа слова *ունկն*, как и *ուչ* – *ակն* “глаз”. *Ն* в слове *ունկն* является следствием метатезы, а *ջ* в слове *ականջ(ք)*, вероятно, появилось по подобию форм единственного числа родительного, родительного-дательного и предложного падежей некоторых существительных, оканчивающихся на *ջ* (ср. *գիւղ, կիւն, այգի, կղզի, տարի* ևն). *Մուկ*, как и родственные ему другие и.-е. формы, происходит от праформы **mūs*, **ուկ-* и **ակ-* от праформ **aus-* или **ōus-* с отпадением **u* или с изменением дифтонгов в обычные гласные.

Ключевые слова: и.-е. праформы *մուկն, ունկն*, диалектные формы, конечный сонорный *ն*, глухие фрикативные, переход и.-е. **s > в арм. կ(k)*

VARDAN PETROSYAN – Etymological Observations (մուկն, ունկն, ականջ(-ք)). – Starting from H. Hubschmann an Armenian origin has been ascribed to the sound (ն - n) of the Armenian words which make rhymes with the sonorant- ն (n) (*ակն*,

արմուկն, բեւեկն, դարուկն, ծունկն, ձուկն, մուկն, ունկն, etc.) and the proceeding -k-voiceless fricative. Henceforth, -կ- was considered a word-forming particle, namely an augment. The present etymological investigation attempts to demonstrate that this claim is not fully convincing, at least in case of the sound – կ- in words մուկն, ունկն and the plural form of the latter - *ակաւնք*-(*p*). The -կ- in the words mentioned is a root element and represents the IE occlusive phoneme *s. The initial (=root) version of the *մուկն* was * մուկ, which, like other IE languages – Greek, Latin, Indian, Iranian, Slavic, Lithuanian, stems from the IE prototype *mūs. The original root of the word ունկն was *mկ-, and that of *ակաւնք* - *ակ. From the typological perspective, the transition from the IE *s>Arm. կ (k) is grounded by the fact that in some of the languages mentioned above *s is represented by the back-lingual voiceless fricative x [x] (Ancient Slavic, Rus.) ք [x] (Hittite), and also by voiceless occlusive κ (k) - ἀκούω “to hear” in Greek like in Armenian. Initially, the word *ակաւնք* served as the form of the dual number of the word ունկն. Similarly, the word “աչ” acted as the dual number of ալկն (an eye). The sound -ւ- (n)- in the word * ունկ appeared as a result of a change of sounds within a word. The sound - ք – in the word *ակաւնք*-(*p*), in most probability, was the result of the analogy between the sing. Nouns in Genitive-Dative cases (comp. գիտի, կիւն, այգի, կղզի, տարի, etc.) and the with forms in Locative Case ending in – ք (comp. գետնք «գլուղի», կնք «կնք», (յ)այգւնք «այգու(ն)/այգում», (ի) կղզւնք «կղզու(ն)/կղզում», (ի) տարւնք «տարվա /տարում», etc.).

The word մուկ, like in all IE languages, derives from the IE prototype *mūs, while *mկ- and *ակ- stem from the prototypes *aus- or *ōus- * through the dropping of -u or the monophthongization of the diphthong(s) *au/*ōu.

Key words: մուկն, ունկն, Indo European prototypes, dialectal forms, ū sonorant rhyme, voiceless fricatives, transition from the Indo European *s>Armenian կ (k)